ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ն, որը գտնվում է ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5 հասցեում, ստորև ներկայացնում է ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/8-04 ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգի արդյունքում 2015թ-ի դեկտեմբերի 15-ին կնքված ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/8-04-59 ծածկագրով պայմանագրում (այսուհետև՝ Պայմանագիր) 2015թ-ի դեկտեմբերի 16-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ : Կողմերի մոտ անհրաժեշտություն է առաջացել Պայմանագրի 4-րդ կետում և N2 հավելված հանդիսացող Գնման ժամանակացույցում կատարել փոփոխություններ,

Փոփոխության նկարագրություն: Ապրանքի մատակարարման ժամկետի երկարաձգում:

Փոփոխության հիմնավորում: Պայմանագրի 9.4 և 9.6 կետեր

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Ա. Խաչատրյանին:

Հեռախոս՝ 511 787:

Էլ. փոստ՝ datgnumner@mail.ru:

Պատվիրատու՝ «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
15.12.2015թ. ՍԵՐՎԵՐՆԵՐԻ ԳՆՄԱՆ N ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/8-04-59
ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք.Երևան

«16» դեկտեմբերի 2015թ.

<<ՀՀ դատական դեպարտամենտ>> ՊԿՀ-ն՝ ի դեմս ղեկավար Կ. Փոլադյանի (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից, և «ՄԻԿՐՈՐԻՆԳ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ռ.Մալխասյանի (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 15.12.2015թ. կնքված N ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/8-04-59 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 9.4 և 9.6 կետերը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը՝ հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պայմանագրի 4.1 կետը լրացնել 4.1.1 ենթակետով.

<<4.1.1 Պայմանագրի գնի 100 տոկոսը՝ **7 322 700 (յոթ միլիոն երեք հարյուր քսաներկու հազար յոթ հարյուր)** ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կատարողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար մինչև 30.12.2015թ.: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է Պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:>>

1.2 Պայմանագրի 4.2 կետը հաստատել նոր խմբագրությամբ. <<4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:>>

1.3 Պայմանագրի N2 հավելված հանդիսացող «ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ»-ում «Նախատեսվում է գնել 2015թ. Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև դեկտեմբերի 16-ը ներառյալ» բառերը փոխարինել «Նախատեսվում է գնել Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2016թ. հունվարի 14-ը ներառյալ» բառերով:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ	***«ՄԻԿՐՈՐԻՆԳ» ՍՊԸ***
Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5	Հասցե՝ ք. Երևան 0059, Նոր Նորքի 9-րդ զնգ., 13 շ., բն. 14
ՀՎՀՀ՝ 02583241	ՀՎՀՀ՝ 00824922
Հ/Հ՝ 900011192052	Հ/Հ՝ 2050022150151001
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Ինեկոբանկ» ՓԲԸ
Ղեկավար՝ Կ. Փոլադյան	Տնօրեն՝ Ռ.Մ[illegible]
(ստորագրություն)	(ստորագրություն)
Մ.Տ.	Մ.Տ.